ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՏԻՐԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԻՐԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ, ԱՄՆ

Սրտի խոր գոհունակութեամբ տեղեկացանք Հիւսիսային Ամերիկայի հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից, որ այս տարի հանդիսաւորապէս նշուելու է Ձեր ծննդեան 85 եւ գրական գործունէութեան 65-ամեակը:

Մեծարժէք է Ձեր աւանդը հայութեան կեանքում: Դուք, աւելի քան կէս դար, Ձեր ստեղծագործութիւնների միջոցով ծննդավայրից ժառանգած նուիրումի ու զոհողութեան Ձեր ոգին փոխանցում էք մեր ժողովրդի աշխարհասփիւռ զաւակաց՝ նրանց ամենուր կոչելով հաւատարիմ մնալ հայոց ազգային նկարագրին եւ Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցուն:

Ուրախ ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որին «ողջ ազգն հայոց կապեալ կայ», Մեր օրհնութիւնը եւ սրտաբուխ շնորհաւորանքները յղելու Ձեր յոբելեանների առիթով եւ, ընդառաջ Տիրախնամ թեմի բարեջան առաջնորդի խնդրանքին, Հայրապետական Կոնդակով Ձեզ շնորհելու մեր Եկեղեցու

Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ

պատուոյ շքանշանը՝ ի գնահատումն Ձեր հայրենանուէր գործունէութեան եւ գրական վաստակի:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ ամենայն բարիք, որպէսզի Դուք շարունակէք Ձեր

նպաստը բերել Հայոց դպրութեանը, Եկեղեցուն եւ հայապահպանութեան նուիրական գործին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մեծ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ն Փետրուարի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԼԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 3